**ԷՅԹԻ ԳՐՈՒՊ**
A Brighter Tomorrow

29 ապրիլի 2024թ.

№ 10/24

ՀՀ Շրջակա միջավայրի նախարար՝
Պարոն Հակոբ Սիմիդյանին

Հարգելի պարոն նախարար,

Համաձայն «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման՝ ներկայացնում ենք ՀՀ Տավուշի մարզի Վազաշենի հանքերևակման 2023 թվականի տարեկան ամփոփ (միջինացված) հաշվետվությունը:

Եռամսյակային հաշվետվությունների վերլուծություններից պարզվել է, որ հողի, ջրի և օդի փորձանմուշների չափված արժեքների համեմատության ժամանակ դրանց արժեքների էական տարբերություններ չկան, որը հիմք է տալիս ենթադրելու, որ հանքերևակման տարածքում աշխատանքային ծրագրով կատարված աշխատանքների ազդեցությունները շրջակա միջավայրի վրա գտնվում են սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում: Այդ պատճառով դրանց վրա հակազդեցության միջոցառումներ չեն կատարվել:

Կից ներկայացնում ենք՝

- ՀՀ Տավուշի մարզի Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերևակման տեղամասում 2020-2023թթ ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման համար կենսաբազմազանության տարեկան մշտադիտարկումների հաշվետվությունը՝ 22 թերթ
- ՀՀ Տավուշի մարզի Վազաշենի հանքերևակման 2023 թվականի տարեկան ամփոփ (միջինացված) հաշվետվությունը՝ 3 թերթ

Հարգանքով՝

Տնօրեն՝
Տիգրան Ավետիսյան
«ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № Ր-8871
30 04 2024 թ.

Երևան, Ռուստավելի 9
հեռ: +374 10 432 313
E-mail: info@atg.am
www.atgroup.info